THE ADMINISTRATION OF
KARMIRGUKH
GEGARKUNIK REGION REPUBLIK
OF ARMENIA

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ
АДМИНИСТРАЦИЯ ОБЩИНЫ
С. КАРМИРГЮХ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՐՄԻՐԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

գ. Կարմիրգյուղ Գարեգին Նժդեհի փող. 4/1
Հեռ. (0264) 6-06-96, (0264) 6-06-99
Էլ. փոստ karmirgyugh@gmail.com

N23/27
< 30 > 03 2012թ.

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ն. ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Կարմիրգյուղի գյուղապետարանը կից ներկայացնում է համայնքի ղեկավարի թիվ 2, 3 և 4 որոշումների քաղվածքները:

Կարմիրգյուղ համայնքի ղեկավար՝ Մ. Դանիելյան

04 04 2012թ.
1777 12

# Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՐՄԻՐ ԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 4-Ա ՈՐՈՇՈՒՄԻՑ

Կարմիրգյուղ Գարեգին Նժդեհի փող. 4/1, Հեռ. 0(264) 6-06-96
C(264)606-99

*07 մարտ 2012թ.*

Համայնքի վարչական սահմաններում գտնվող հողամասերը վարձակալությամբ օգտագործման տրամադրման մրցութային հանձնաժողովի կազմելու մասին

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետի և ՀՀ Կառավարության 2011թվ. նոյեմբերի 17-ի թիվ 1677 -Ն որոշման 1-ին կետի Թ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզպետի հանձնարարականը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Կազմել հանձնաժողով հետևյալ կազմով.
- Միշա Դանիելյան
- Հրանդիկ Օհանյան
- Մարատ Ղուրշուդյան
- Հակոբ Բաղդասարյան
- Ռուբիկ Արևշատյան
- Ռազմիկ Մարտոյան
- Վանիկ Սարգսյան

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԻՇԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՔԱՂՎԱԾՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԿԱՐՄԻՐ ԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ-0 3-ա ՈՐՈՇՈՒՄԻՑ

Կարմիրգյուղ Գարեգին Նժդեհի փող. 4/1, Հեռ. 0(264) 6-06-96 0(264)6
-06-99

*07 մարտ 2012թ.*

Կարմիրգյուղ համայնքի տարածքում քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տեղեր առանձնացնելու մասին.

Ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 3-րդ մասով և <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով՝

### ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ազգային ժողովի պատգամավորի ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների /կուսակցությունների դաշինքների/ քարոզչական պաստառները փակցնելու համար Կարմիրգյուղ համայնքի տարածքում առանձնացնել հետևյալ անվճար տեղերը՝

- Մշակույթի տուն Ազատության պող. 204/1 3 քառ. մ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԻՇԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ

# ՔԱՂՎԱԾՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
## ԿԱՐՄԻՐ ԳՅՈՒՂԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ
## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԻՎ 2-Ա ՈՐՈՇՈՒՄԻՑ

---

Կարմիրգյուղ Գարեգին Նժդեհի փող. 4/1, Հեռ. 0(264) 6-06-96
0(264)606-99

*07 մարտ 2012թ.*

Կարմիրգյուղ համայնքի Պարույր Սևակի փող. 61 հասցեի հողամասի շենք շինությունների նկատմամբ Յուրիկ Սուրենի Նազարյանի գույքայի իրավունքները վերականգնելու մասին

Ղեկավարվելով ՀՀ հողայի օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերի պահանջներով, օրենսգրքի 60-րդ հոդվածի պահանջներով , ՀՀ Կառավարության 27.04.2010թվ. <<իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2005թ դեկտեմբերի 29-ի Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակարանային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխման, անշարժ գույքի ըստ դրա գտնվելու կամ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին 2387-Ն որոշման պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վերականգնել Կարմիրգյուղ համայնքի Պարույր Սևակի փող. 61 հասցեում գտնվող Յուրիկ Սուրենի Նազարյանին ժառանգության իրավունքով ստացած հողօգտագործման իրավունքը՝ բնակելի տան կառուցապատման և սպասարկման համար հատկացված 0.10հա մակերեսով չափով՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը 0.10հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք շինության/կառուցված 1980թ/ նկատմամբ՝ որպես օրինական գույք:

2. Շենք-շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմաներին և դրա մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գավառի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Հողամասի սահմանները որոշում են Կարմիրգյուղի գյուղապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի կողմից տրված գլխավոր հատակագծով:

4. Բնակելի տանը տրամադրել Կարմիրգյուղ համայնքի Պարույր Սևակի փող. 61 հասցեն:

5. սույն որոշումը ներկայացնել ՀՀ Կառավարության առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գավառի տարածքային ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի գյուղ բաժնի պետ՝ Հ. Բաղդասարյանի վրա:

7. Նշված հողամասը 0.10հա ընդգրկված չէ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսնված սահմանափակումների ցանկում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԻՇԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ